

VALLEY PRESBYTERIAN HOSPITAL Քաղաքականություն և Ընթացակարգ		
ԹԵՄԱ՝ Հիվանդի համար Թարգմանության Ուղեցույցներ և Ծառայություններ		
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝ Վարչական մաս	ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է՝ 6/2012	ՁԵՌՆԱՐԿ՝ Վարչական
Ստեղծման Ամսաթիվ՝ 10/2011թ.	Դիտարկման Ամսաթիվ՝ Վերանայման Ամսաթիվ՝ 8/2015թ.	Հաստատված է՝ Որակի Հանձնաժողովի կողմից 10/6/2015թ. Բժշկական Գործադիր Հանձնաժողովի կողմից 10/12/2015թ. Տնօրենների Խորհրդի կողմից 10/29/2015թ.

ՆՊԱՏԱԿ՝

Հիվանդանոցում հիվանդի համար թարգմանության ուղեցույցների հաստատում:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝

Հիվանդանոցը պարտավորվում է ապահովել, որ բոլոր ոչ անգլիախոս կամ լսողության հետ խնդիրներ ունեցող հիվանդները և ընտանիքները ի վիճակի լինեն արդյունավետ կերպով հաղորդել իրենց կարիքները անձնակազմին և բժիշկներին՝ նրանց թարգմանչական ծառայություններ տրամադրելու միջոցով:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ՝

- I. Հիվանդանոցի անձնակազմը ընդունելության պահին կորոշի բոլոր հիվանդների լեզվական և հոդորդակցման կարիքները: Հիվանդի նախընտրելի լեզուն պետք է գրանցվի իր բժշկական փաստաթղթերում:
- II. Հիվանդանոցը պետք է հիվանդին և/կամ իրավաբանական ներկայացուցչին իրազեկի իրենց իրավունքները՝ այն լեզվով և ձևաչափով, որը հասկանալի կլինի հիվանդին և/կամ իրավաբանական ներկայացուցչին:
- III. Լսողության հետ խնդիրներ ունեցող հիվանդները նմանապես կբնորոշվեն որպես այդպիսիք իրենց բժշկական փաստաթղթերում:
- IV. Հասանելի են հետևյալ ծառայությունները՝
 - A. Տեսաձայնային Հեռահար Թարգմանչական (Video Remote Interpretive (VRI)) ծառայությունները հասանելի են Հիվանդանոցի աշխատակիցների և բժիշկների համար:
 1. Թարգմանության կարիք ունեցող հիվանդի առաջնային լեզուն կընտրվի դիսփլեի էկրանին:
 2. Հիվանդի ընտրությունը՝ կին կամ տղամարդ թարգմանչի հարցում:

VALLEY PRESBYTERIAN HOSPITAL

Քաղաքականություն և Ընթացակարգ

ԹԵՄԱ՝ Հիվանդի համար Թարգմանության Ուղեցույցներ և Ծառայություններ		
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝ Վարչական մաս	ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է՝ 6/2012	ՁԵՌՆԱՐԿ՝ Վարչական
Ստեղծման Ամսաթիվ՝ 10/2011թ.	Դիտարկման Ամսաթիվ՝ Վերանայման Ամսաթիվ՝ 8/2015թ.	Հաստատված է՝ Որակի Հանձնաժողովի կողմից 10/6/2015թ. Բժշկական Գործադիր Հանձնաժողովի կողմից 10/12/2015թ. Տնօրենների Խորհրդի կողմից 10/29/2015թ.

3. Հիվանդի նախընտրությունը՝ VRI թարգմանչի տեսադաշտում լինելու կամ չլինելու հարցում (առանձին էկրան):
4. Լսողության հետ խնդիրներ ունեցող հիվանդներին նույնպես կտրամադրվեն համապատասխան թարգմանիչներ Տեսաձայնային Հեռահար Թարգմանչական (VRI) ծառայությունների միջոցով:

B. Հավատարմագրված Լեզվական Հեռախոսային (Certified Language Line) ծառայությունները հասանելի են Հիվանդանոցի աշխատակիցների և բժիշկների համար: Հիվանդանոցի անձնակազմը հիվանդի անկողնու մոտ կամ նրա խնամքի իրականացման վայրում կտեղադրի երկակի լսավողով թարգմանչական ծառայության հեռախոսը:

1. Հիվանդանոցի անձնակազմը կգանգահարի Հավատարմագրված Լեզվական Հեռախոսային ծառայություններին 855-436-9533 հեռախոսահամարով: Հավատարմագրված Թարգմանիչը անձնակազմից կհարցնի՝
 - a. Հիվանդի առաջնային լեզուն, որն ունի թարգմանության կարիք:
 - b. Հիվանդի բժշկական գրանցման համարը:

V. Հիվանդի հիվանդանոցում գտնվելու ողջ ընթացքում թարգմանչի (լեզվական կամ լսողության խնդիրների հետ կապված) ծառայություններից օգտվելու դեպքերը՝ համապատասխանաբար կգրառվեն հիվանդի բժշկական փաստաթղթերում:

VALLEY PRESBYTERIAN HOSPITAL

Քաղաքականություն և Ընթացակարգ

ԹԵՄԱ՝ Հիվանդի համար Թարգմանության Ուղեցույցներ և Ծառայություններ

<p>ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝ Վարչական մաս</p>	<p>ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է՝ 6/2012</p>	<p>ՁԵՌՆԱՐԿ՝ Վարչական</p>
<p>Ստեղծման Ամսաթիվ՝ 10/2011թ.</p>	<p>Դիտարկման Ամսաթիվ՝ Վերանայման Ամսաթիվ՝ 8/2015թ.</p>	<p>Հաստատված է՝ Որակի Հանձնաժողովի կողմից 10/6/2015թ. Բժշկական Գործադիր Հանձնաժողովի կողմից 10/12/2015թ. Տնօրենների Խորհրդի կողմից 10/29/2015թ.</p>

- A. Հավատարմագրված Լեզվական Միջազգային ծառայությունները և/կամ Տեսաձայնային Հեռահար Թարգմանչական (VRI) ծառայությունները Հիվանդանոցի անձնակազմին կտրամադրեն հանդիպման համարանիշ (encounter number)՝ յուրաքանչյուր թարգմանության սեսիայի համար:
- B. Հանդիպման համարանիշը (encounter number) կգրառվի հիվանդի բժշկական փաստաթղթերում:
- C. Համաձայնությունների ստորագրման ժամանակ թարգմանչական ծառայություններից օգտվելու դեպքում՝ հանդիպման համարանիշը (encounter number)/թարգմանչի անունը կնշվեն համաձայնության ձևաթղթի վրա: